

չըջանին, ուսական օրինատացիա չունէր: Հայ հաւաքականութիւնը բոլշեւիկեան թափահարումներէ լաւ բան չէր սպասեր եւ հոգու խորքի մէջ վախ մը կը սնուցանէր, որ այդ կարմիր աստղերը կարող էին կարմիր մանիկներու փոխուիլ Թուրքիոյ եւ Ասորիէյցանի հորիզոններու վրայ: Այդպէս ալ եղաւ:

Հայ բոլշեւիկ Դոն-Բիշոտները սկսան Տէրեանի զիմումնադրով, Լենինի ղեկընտնով եւ հասան Երեւան: Անոնք եկան այն խոստումներով, որ Ղարաբաղըը, Ախալքալաքը եւ Նախիջևանը պիտի միացնէին Հայաստանին: Անոնք եկան այն հովերով, որ պիտի ստիպէին «եղբայրական» Թուրքիան դատարկելու Սուրմալուն եւ Կարսը: Դեռ աւելին. անոնք եկան եւ փոխացին հայ զինուորի, սպայի, մտաւորականի, բանուորի եւ գիւղացու ականջին, որ չուսող ամբողջ Թուրքիան Խորհրդային իշխանութեան պիտի ենթարկուի, եւ բանուորագիւղացիական կարգերու հարկադրանքով, թուրքն ու հայը եղբայրացած, Տաճկահայաստանի խնդիրն ալ պիտի կարգադրուի, առանց կռուի, առանց արիւնի...

Ազգային ճգնաժամը իր դադաթնակէտին հասաւ: Քանի մը զօրեղ ճիգերէ յետոյ, հայ ժողովուրդը ուժասպառ՝ տեղի տուաւ եւ պահ մը ափ ի բերան մտիկ ըրաւ սա նոր եկող բոլշեւիկները, եւ դիտու երբեմնով մը, ապշած աչքերով դիտեց եկող ուսը, իսկ աչքի պոչով նայեց գէպի Թուրքիա: Պահ մը տատանուեցաւ, կարծելով, որ լաւ չգնահատուած ուժ մը հրապարակ եկած է, նոր արշալոյս մը բանալու: Ոմանք թեթեւ ու դիւրախաբ՝ այդ անդոյ արշալոյսը տեսնելու աճապարանքով հակուեցան բոլշեւիկներու կողմը: Քաջազնունին, որ ունեցաւ իր արժանաւոր չքախումբը Ա. Ղազարեանէ, Սնարէ եւ մէկ քանի ուրիշներէ կազմուած, եւ Ռամկալարները, ընկերակցութեամբ անուանական Հնչակեաններու, եւ անողնայար հայ հարուստ կոչուածին միակ միսթարանքն եղան հայ բոլշեւիկներուն, որոնց մէկ մասն, անկասկած՝ խաբուեցաւ, սըխալուեցաւ եւ հիասթափուեցաւ, սակայն կուսակցական նեղմտութիւնն ու տհասութիւնը լուծեան եւ սպասումի դատապարտեց զանոնք:

III

1921-1923 թուականները հայ բոլշեւիկներու համար քաղաքական պարտութեան տարիներ եղան: Քաղաքական հրթիռներ արձակելէ յետոյ, Երեւանի այսօրուան վարիչները վերջնականօրէն նահանջեցին թրքական ներկայ սահմաններէն, երեւի Մոսկուայի իրենց տէրերու հրամանով: Միւս կողմէ՝ երեք տարիներ անցան, ու բոլշեւիկեան Կովկասի «եղբայրացումն» ալ չօգնեց հայ գործակատարներուն: Ազգերու ինքնորոշման սկզբունքը դորձադրելի եղաւ ուրիշներու համար, սակայն, «եղբայրօրէն», այդ զլացուեցաւ հայերուն: Եւ, վերջապէս, կար «ազգամիջեան խաղաղութիւնը» (որու պատճառով այնքան քննադատած էին Հ. Յ. Դաշնակցութիւնը), որու համար ստիպուած էին տեղի տալ Նախիջևանի, Ղարաբաղի եւ Ախալքալաքի խնդիրներու մէջ, որպէսզի կարենային յայտարարել, թէ մենք մեր դրացիներուն հետ հիմա կռիւ չունինք:

Բնական է, որ, եթէ հայ բոլշեւիկները խաբուած չըլլային, ու յաջողէին Հայաստանի սահմանները լայնցնել, իրենց այսօրուան պատճառարանութիւններու փոխարէն, մեծադիպող յայտարարութիւնները ոսկէ տախտակներու վրայ պիտի արձանագրէին, պատմութեան յանձնելու համար: Անոնք առաջապահ դաւաճաններն եղան հայոց անկախութիւնը կործանելու, եւ յուսացին իրենց ոտքի տակի հողը ամբացնել, ուսական սուրինի ուժով: Սակայն, երեք տարին բաւական եղաւ, որ առանց քիթը ազգամիջեան ժայռերուն զարնուի ու անոնք անսխառունակ պարտութեան մատնուին:

Անխառունակ է այս պարտութիւնը, մանաւանդ անոր համար, որ հայ բոլշեւիկները առանց պայքարի կը պարտուէին: Անոնց ամբողջ յոյսը բոլշեւիկեան Ռուսաստանի եւ համալսարհային յեղափոխութեան վրայ դրուած էր: Անոնք հաւատացած էին, որ յեղափոխութեան երազային ալիքներու հետ, հայկական «իմպերիալիզմը» կը տապալուի, եւ անոր տեղ կը կանգնի «բանուորագիւղացիական» Հայաստանը: Անոնց մեծամասնութիւնը ազգային հարցը կ'երեւակայէր լուծել առանց ճիգի, իսկ միւս թեւի համար այդ բոլորը արժէքազուրկ